ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.

«Տէր Կոմիտասին տղան առողջապէս կարէ այժմ չրջիլ. և աւուրն մին ճուլի թօշակ եղև նմա ի սրբազանէ պապէն[1]»։ (Անտոն քահանայ առ Մխիթար Աբբայ. 1720, Նոյեմբերի 23 [Հռովմ])։

Բ.

Վասն վարուց և պատմութեան յակոբու առաքելոյն, թէ որպիսի գիտես կամ լուեալ ես յուժամ գնաց սպանիօլի յերկիրն, ինչ անցք կամ հրաշագործութիւն եղև, զէրայ աստ խնդրեցին ծառայէդ. և ես յորոնեցի Ճառընտրին մէջն որ մեր եկեղեցին կայ երկաթագրով յոյժ հին և վաղուց գրեալ[2]. գտի վարքն առաքելոյն, բայց մին թուղթ կտրած էր։ Գերարգութիւն ձեր բազում վարուց և սրբոց և պատմութեանց տեղեակ է. ասեն սպանեօլներն թէ յուժամ առաքեալն յակոբ էհաս այնմ գաւառի, որ մեք ասեմք եզր Աստուածածին, երևեցաւ նմա սուրբ կոյսն ի վերայ միոյ սեան և մխիթարեաց ասելով թէ անուան իմոյ տեառնագրեայ աստ տաճար մի, և չինեաց առաքեալն, և յետոյ դարձաւ Երուսաղէմ և ետես կոյսն և գլխատեցաւ ի հերովդեսէ որպէս գրեալ է. ես ծանօթութիւն տայ իտալիանի գիրն որ ի մէջ գրիս է. ողորմած հոգի վարդապետն ասէր. ես լսած եմ և ոչ գիտեմ հաւաստի զոր վկայեմ. նոյն ժամանակին չինեաց առաքեալն թաթէոս յուրհայու աստուածածնայ եկեղեցին արևելս. և առաքեալն յակոբ արևմուտս։ Զայս վերոգրեալ և խնդրեալ պատմութիւնս որպէս գիտես կամ լուեալ ես, գրեսցես վկայելով թէ ինչ գրքի մէջ, կամ հեղինակն։ (Ստեփաննոս արեղայ առ Մխիթար աբբայ յաւիսն 1722 յունիսի ԻԷ, ի վեծն Հռոմ)։

Գ.

Սպահան միրվէիս օղլին[3] թէպէտ վաղ ուրեմն պաշարեալ էր. զկնի ջողայ առնլոյն և գերելոյն աւելի քան զքսան աղջկունս, որոց մինն է չէհրիմանենց աղջիկն, և կողոպտելոյն զկնի,

---

1. Այս տեղեկութիւնը հետևեալ հարցը կը դնէ մեր առջև։ Եր. Տէր Կոմիտաս, ըստ իւր կենսագիրներուն, ունեցած է հինգ աղջիկ և երկու մանչ զաւակ՝ Նահապետ և Յովհաննէս անուններով. առաջինը 1708-ին մեռած է ի Հռովմ, իսկ երկրորդը՝ Նաբոլիի մէջ թարգմանի պաշտօն ունեցած է։ Արդ մեր 1720 թուական նամակաւ յիշատակուածը ո՞րն էր. անշուշտ չէր կրնար Նահապետն ըլլալ, քանի որ սա արդէն 1708-ին վախճանած է։ Պիտի ըսենք ուրեմն որ Յովհաննէսն է, որ և Հռովմ ապաստանած էր Հօրը նահատակութենէ վերջ (տես Summarium super dubio an constet de martyrio [Gomidæ de Carbognano], էջ 207).

2. Դժբախտաբար չէ յիշատակուած այսքան թանկագին ճառընտրի մը բուն թուականը մեր վաւերաթուղթին մէջ, ինչ որ հետաքրքրական էր, գիտնալու համար թէ ի՞նչ ասիճանի հնութեան տարբերութիւն կայ ասոր և սպանիական աւանդութեան գլխաւոր հիմ ծառայող Երուսաղէմ գտնուած հայ ճառընտրին միջև՝ որ գրուած է յամին 1054. (Աւգերեան՝ Վարք Սրբոց. Հտ. Դ. էջ 303).

3. Միրվէիզ այդ ժամանակի Պարսից արևելեան աղուանից զօրեղ գլուխն ու առաջնորդն էր։